ՆՈՐ-ԴԱՐ

№ 171 ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ Շաբաթ 10 Հոկտեմբերի — 1887 — Շաբաթ 10 Հոկտեմբերի ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ № 171

Տարեկան 10 բուբլի, վեց ամիսը՝ 6 բուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ., ամիսը՝ 1 ր. 50 կ., Հատը՝ 5 կոպեկ։
Բաժանորդ դրվում են Թիֆլիսում միմիայն խմբագրատունը։

Խմբագրատունը Հասցեն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ»
կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի տոն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով։
Յայտարարութիւնների բաւական 2 կ., ընկալմանների համար կը հինգապատիկ։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

ՉԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ ՄՏՆԵԼՈՒ ԿՈՉՈՒՄՆ

Թիֆլիսի զինուորական հաստատութիւնը յայտնում է, որ այս տարի երիտասարդների զինուորական ծառայութեան կոչուիլը պիտի սկսուի նոյեմբերի 1-ից։ Այդ օրը, առաւօտեան ժամը 8-ին, Գոլովինսկի պրոսպեկտի վերայ գտնուող ցիրկը պիտի դան 1) Նրանք, որոնց հասակը պիտի որոշուի իրենց արտաքին կերպարանքին նայելով, համաձայն զինուորագրական օրէնքների 109-րդ և 112-րդ յօդուածների հիման վերայ. 2) Նրանք, որոնք, զին. կանոն. 217-րդ և 218-րդ յօդուածների հիման վերայ ծառայութեան կոչուած են առանց վիճակահանութեան. 3) Նրանք, որոնք արձակուրդ են ստացել մինչև գալ զինուորաժողովը, և 4) Բոլորեքեանք, որոնց անունները մտած է այս տարուայ կոչնագրի մէջ, բացի ա). Նրանցից, որոնք դրանից յետոյ յունադաւանի կամ միւս քրիստոնեաների քահանայութեան աստիճան են ստացել, ինչպէս և յունադաւան սաղմոսասացներ են. բ) Բացի նրանցից, որոնք ուսումնարաններում դեռ սովորելով, ժամանակ են ստացել իրենց ուսումն աւարտելու, և գ) բացի նրանցից, որոնք նոյնպէս ժամանակամիջոց են ստացել ծառայութեան, պայմանների և առևտրական նաւերի մէջ լինելով։

3—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Առաջնորդող. — Ծխականների և ժամաւորների խնդիրը։
Քրոնիկոն. — Լուրեր։ — Հանելուկ գործիչներին նուէր։ — Ցարդուլ խմբագիր։
Թղթակցութիւններ. — Խանքինդ։ — Սղնախ։
Քաղաքական. — Լուրեր։
Խառն լուրեր։
«Նոր-Դար»-ի հեռագիրներ։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 9 Հոկտեմբերի 1887

ԾԽԱԿԱՆՆԵՐԻ ԵՒ ԺԱՄԱՒՈՐՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ

—

«Նոր-Դար»-ի յայտարարութեան բաժնում հրատարակուած մի յայտարարութիւն ծանուցանում է, որ Կովկասի Ս. Աստուածածնի (Թանդոյեան) եկեղեցու ծխականները հրաւիրվում են ընտրելու նոր երեցփոխան, որովհետև այժմեան երեցփոխանի պաշտօնավարութեան ժամանակը լրացել է։ Այդ յայտարարութիւնը առիթ է տալիս մեզ կրկին յարուցանելու ծխականների և ժամաւորների խնդիրը, որի մասին իւր ժամանակին մեր մամուլի մէջ գրուել է։

Հրաւիրվում են մի եկեղեցու համար երեցփոխան ընտրելու այդ եկեղեցու. ծխականները միայն, իսկ ժամաւորները չեն հրաւիրվում, որովհետև այս վերջինները իրաւունք չունին այդ եկեղեցու անունով և այդ եկեղեցու համար կատարուող ընտրութիւններին մասնակցելու մի հրահանգի յօդուածի զօրութեամբ։

Այս հանգամանքը և մէկ էլ այն, որ մի անձն եկեղեցու վերաբերութեամբ երկու դրութեան մէջ է գնվում, այսինքն ժամաւորի և ծխականի, պարտաւորեցնում են մեզ որոշելու ծխական և ժամաւոր բառերի միտքը հետևելով յիշեալ հրահանգին։

Մի որոշ եկեղեցու ծխական կոչվում է նա, որի տան քահանան այդ եկեղեցու միաբան է և քանանայի պաշտօն է կատարում, իսկ ժամաւոր կոչվում է նա, որի տան քահանան թէպէտև ուրիշ եկեղեցու միաբան է, բայց ինքը այդ եկեղեցին է յաճախում։

Ծխականի և ժամաւորի մէջ ի հարկէ տարաձայնութիւն կարող չէ ծագել, եթէ միևնոյն մարդը մի եկեղեցու վերաբերութեամբ թէ ծխական է և թէ ժամաւոր։ Շատ էլ լաւ կը լինէր, որ իւրաքանչիւր հաստատեալ եկեղեցու ծխական լինէր, որտեղ որ ինքը միևնոյն ժամանակ ժամաւոր է և իւր ծխատէր քահանայի առաջնորդութեամբ աշխատում է նոյն եկեղեցու պայծառութեան, շինութեան համար և կատարեալ իրաւունքով պիտի մասնակցէր եկեղեցու կառավարութեան, երեցփոխանի ընտրութեան, նոյն եկեղեցու դպրոցի պահպանութեան, հոգաբարձուների ընտրութեան գործում։

Բայց ինչ անենք, որ այդպէս չէ. այդպէս չլինելու առաջին ապացոյցն այն է, որ ծխականը իրաւունք ունի եկեղեցու հաշիւների մէջ խառնուելու, երեցփոխանի ընտրութեանը մասնակցելու, նոյն իսկ երեցփոխան ընտրուելու, եկեղեցու դպրոցի հոգաբարձութեան ընտրութեանը մասնակցելու, իսկ ժամաւորը այդ իրաւունքներից զրկուած է։

Ժամաւորը իրաւունք պիտի ունենար տրտնջալու, չէ որ ինքը մի և նոյն եկեղեցու ծխական է, որտեղ կարող էր ծխականի իրաւունքները վայելել և պարտաւորութիւնները կատարել, չէ որ ինքը այդ եկեղեցու պատահական յաճախող է միայն և դրա համար էլ ժամաւոր է կոչվում։

Բայց մի՞թէ այդպէս է։ Կեանքը գործերը բերել է այնպէս է դարսել, որ այսօր առանց բռնութիւն գործելու, առանց արդարութեան և առողջ լոգիկայի դէմ մեղանչելու կարելի չէ ժամաւորներին զրկել այն իրաւունքներից, որոնք տրուած են ծխականներին։

Բաւական է միայն օրինակով ցոյց տալ թէ քաղաքիս հայոց շատ եկեղեցիների ծխականները և ժամաւորները ինչ մարդիկ են և ինչ ճանապարհով են մի որևէ եկեղեցու Ծխական կամ Ժամաւոր դառնում։

Նախաջրհեղեղեան ժամանակներում չենք ասում, այլ այն ժամանակներում քանի որ քաղաքիս եկեղեցիները հրահանգներով չէին կառավարվում, պատահում էր որ մարդիկ ընդունում էին այս ինչ քահանային իրենց տան քահանայ, ուրեմն նրա ծուխն էին համարվում, բայց իրենք զանազան հանգամանքների պատճառով մի ուրիշ եկեղեցի էին յաճախում, որտեղ միաբան չէր իրենց ծխատէր քահանան, այդ եկեղեցու շինութեան և պայծառութեան համար աշխատում էին դրանք և իբրև հայ քրիստոնեայ իրենց լումայն էին ձգում այդ եկեղեցու գանձանակը և անարգել մասնակցում էին այդ եկեղեցու համար և անունով կատարուող ընտրութիւններին։

Այդ մարդիկ ամենևին իրենց իրաւունքը չէին համարում և չէին էլ մտածում գնալու և խառնուելու այն եկեղեցու գործերի մէջ, որտեղ թէպէտև պաշտօն էր վարում իրենց ծխատէր քահանան, բայց իրենք այդ եկեղեցու օգտին Ֆ հոպէկ անգամ չունին տուած։

Այսօր այդ մարդիկը զրկվում են այն եկեղեցու գործերին և ընտրութիւններին մասնակցելու իրաւունքից Ժամաւոր համարուելով և այն եկեղեցու գործերի մէջ խառնուելու իրաւունք են ստանում իբրև Ծխական, որի համար ոչինչ չունին տրած և ուր ամենևին չեն յաճախում։

Վերջերումս յաձախակի գործ դրած կարգով կարող է տեղական հոգևոր իշխանութեան կարգադրութեամբ Նաւթլուղի եկեղեցու քահանան նշանակուել Մողնու եկեղեցու վերայ, իսկ Մողնու եկեղեցու քահանան նշանակուել Զուղուրէթի եկեղեցու վերայ քահանայ։

Շատերը գիտեն, որ Մողնու եկեղեցու միաբան Զմշկեան քահանան նշանակուած է Բեթղեհէմի վերայ, իսկ Բեթղեհէմի քահանայ հայը Սուզանաջեանը նշանակուած է Մողնու վերայ։

Այդպիսով դուրս է գալիս, որ Մողնու եկեղեցու ժամաւորը, որ այդ եկեղեցու պայծառութեան համար շատ աշխատանք ունի, եթէ պատահմամբ այդ եկեղեցուց Նաւթլուղի եկեղեցու վերայ նշանակուած քահանան իւր տան քահանան է, կորցնում է Մողնու եկեղեցու ընտրութիւններին մասնակցելու իրաւունքը և ընկնում է Նաւթլուղ։

Այս երկարաբանութիւնը անում ենք, որպէս զի ընթերցողը լաւ ըմբռնէ Ծխական և Ժամաւոր դրութիւնը այսօր եկեղեցու վերաբերութեամբ։ Այդ աւելի լաւ կը լուսաբանուի վաղը կիրակի Կուկիայի Ս. Աստուածածնի եկեղեցու երեցփոխանի ընտրութեամբը։

Այդ եկեղեցին կանգնեցնող, եկեղեցու համար մեծաքանակ գումարներ նուիրող, հասկացող և դիրք ունեցող մարդիկ, աստիճանաւորներ, բժիշկներ, վաճառականներ և այլն զրկուած են իրենց կանգնեցրած եկեղեցու համար կատարուող ընտրութիւններին մասնակցելու իրաւունքից, որովհետև այսօր դրանք Ժամաւոր են կոչվում, իսկ իրաւունք են ստանում եկեղեցու համար երեցփոխան, նրա դպրոցի համար հոգաբարձուներ ընտրելու մարդիկ, որոնք բոլորն էլ համարեա թէ անդրագէտ են, խեղճ դասին պատկանող, որոնք ոչ այդ եկեղեցին են յաճախում և ոչ էլ Ֆ հոպէկ ունին տուած այդ եկեղեցու շինութեան և պահպանութեան օգտին։ Այս առաջ է եկել նրանից, որ այդտեղ մի քահանայ է նշանակուել և իւր հետ բերում է իւր ծուխը—ընտրութիւնների ժամանակ։

Եթէ այսօր ինքը Թանդոյեանցը կենդանի լինէր, նա էլ իրաւունք չպիտի ունենար մասնակցելու ոչ երեցփոխանի ընտրութեանը և ոչ էլ իւր փողով հիմնուած և պահպանուող դպրոցի հոգաբարձական ընտրութիւններին։

Ցանկալի էր, որ ծխականի և ժամաւորի խնդրի վերայ ուշադրութիւն դարձնէր բարձր հոգևոր իշխանութիւնը և այնպէս կարգ ձրգէր, որ թէ մեր եկեղեցու ոգուն համապատասխան լինէր և թէ ամեն տեղի հայոց համար էլ պարտաւորեցուցիչ և միատեսակ լիներ։

ՔՐՈՆԻԿՈՆ

Շաբաթ օր, հոկտեմբերի 10-ին Բարձրագոյն Թիֆլիս գալ կը հաճին Նոցին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայևիչը և Մեծ Իշխանուհի Օլգա Ֆէոդորովնան իրենց Օդոստափառ զաւակների հետ։ Երկաթուղու կայարանում Նոցին Մեծութեան պիտի դիմաւորեն վարչական ներկայացուցիչները, քաղաքագլուխը և քաղաքային խորհրդի կողմից պատգամաւորութիւն։ Քաղաքագլուխը կը մատուցանէ ազ ու հաց։ Այնուհետև Նորին Բարձրութիւնը Կովկասեան գրենադէրների ռմբաձիգ գունդը դիտելով, կիջնեն պալատ, ուր «Нов. Об.»-ի տեսակով, Նորին Բարձրութիւն Մեծ. Իշխանուհուն կը ներկայանան իւր անուան հաստատուած Թիֆլիսի իգական և արական գիմնազիների և պրոգիմնազիների կողմից պատգամաւորութիւն։

—

Երեքշաբթի, հոկտեմբերի 6-ին կայացաւ Կովկասի գիւղատնտեսական ընկերութեան ընդհանուր ժողովը, որ բացուեց ընկերութեան խորհրդի, ամառուայ ընթացքում, քննած գործերի հաշուով։ Այնուհետև ժողովի փոխնախագահ իշ. Զօրջաձէն յայտնեց Թիֆլիսում գիւղ. տնտ. ցուցահանդէս կազմելու համար ընկերութեան Թիֆլիսի քաղաքային վարչութեան օժանդակութիւն խնդրելու խմբագրով արած դիմումի հետևանքը, որ, ինչպէս յայտնի է արդէն «Նոր-Դար»-ի ընթերցողներին, քաղաքային խորհուրդի անցեալ նիստի արած որոշման համաձայն հաչ-ից, բացասական է եղել։ Ընկերութեան խորհուրդը, այդ պատճառով, քաղաքի օգնութեան վերայ յոյս չդնելով, բայց և այնպէս ուզում է այդ, թէև սահմանափակ կերպով, գլուխ բերել։ Խորհուրդը կարծում է, որ պէտք է անմիջապէս դիմել պետական կալուածների մինիստրութեան այդ բանի համար թոյլտուութիւն և օժանդակութիւն խնդրելով, թէև այդ լինի փոքր գումար։ Ընդհանուր ժողովը ընդունեց այդ առաջարկութիւնը և յանձնեց խորհրդին գլուխ բերել այդ. ցուցահանդէսը կառնենալ միայն երկրագործական, զինեղործական և չերամապահական բաժինները։

Այնուհետև ընկերութեան անդամ Խատիսեան յայտնեց, որ Քութայիսի նահանգապետը խնդրել է իրեն՝ դիմելու գիւղ. տնտ. ընկերութեան, որպէս զի դա օգնէ իրեն գիւղատնտեսական ուսումնարան հիմնելու Քութայիսում։ Խորհուրդը առաջարկում է այդ նպատակով Այգեբանական դպրոցի կառավարիչ պ. Օստապովիչին ուղարկել Քութայիս այդ գործին կարևոր օգնութիւնը հասցնելու համար։

Այնուհետև ընկերութիւնը զբաղուեցաւ քիմիայի մագիստրոս պ. Սարուվէի հաղորդագրութիւնը Կովկասում նոր տարածուող խաղողի Perenospora Viticola հիւանդութեան առաջն առնելու մասին։ Հաղորդագրութեան մէջ ասուած է, թէ ինչպէս առաջին անգամ 1848-ին Կովկասում երևում է խաղողի Oidium Fuckeri հիւանդութիւնը, նրա տեսքը, 1881-ին երևում է Ֆիլոկսերան։ Այժմ երևում է նոր, վերոյիշեալ հիւանդութիւնը, որով վարակուած որթերը կորցնում են պտուղ տալու ընդունակութիւնը կիսով և աւելի չափով։ Հիւանդ որթի տերևը կամաց-կամաց չորանում և թափվում է, և եթէ հիւանդութիւնը մի քանի տարի չարունակ միևնոյն տեղում երևայ, որթը բոլորովին կը մեռնի։ Perenospora հիւանդութիւնը աւելի վտանգաւոր է քան Ֆիլոկսերան և անհրաժեշտ ապրութեամբ էլ տարածվում է Կախեթում, Թիֆլիսում և Դօրիում։ Պ. Սարուվէի հաղորդագրութիւնը նախ քննուելով ընկերութեան խորհուրդում, որոշուել է նախ քան մի բանի ձեռնարկելը լաւ քննել հիւանդութիւնը, արդեօք դա Perenospora հիւանդութիւնն է՝ թէ ուրիշ. ուստի ենթադրում է ուղարկել հիւանդ տերևները

ուսումնասիրելու համար Պետերբուրգ պրոֆեսոր Վ. օրոնինին և արտասահման պրոֆեսոր Բարոյին։

Եղան մի քանի առաջարկութիւններ և վիճաբանութիւններ, բայց վերջ ի վերջոյ որոշուեցաւ հարցը թողնել առանց հետևանքի՝ մինչև որ պ.պ. Բարո և Վ. օրոնին պրոֆեսորներից տեղեկութիւն կը ստանան։

Նիստի վերջում պ. Ջորջաձէն յայտնեց, որ ինքը հրաժարվում է իւր պաշտօնից, որովհետև առողջութիւնը չէ ներում և խնդրեց որ ժողովը դալ նրան աչքի առաջ ունենալ այդ։

—

ՆԻԺԻՑ.—Հոկտեմբեր ամիսն է, որ իւր սառն քամիների հետ բերում է ինչպէս բոլոր՝ նմանապէս և մեր Նիժեցիների համար հոգսերի օրեր։ Աշնանացանը, ձմեռուայ համար փայտ կրելը, անասունների համար բնակութեան և տեղի պատրաստութիւն տեսնելը (այս տարի տեղի ունեցած անասունների հիւանդութիւնից հազիւ մի-այն ⅓ մասը աղատուեցաւ) կոչում են դէպի իրենց աշխատաւորներին։ Եղանակը զդալի կերպով ցուրտ է, համարեա ամեն օր Նիժը ամպամած է. համատարած թանձր մշաշը այլակերպում է Նիժի արտաքին տեսարանը ու օրեր, շաբաթներ անցնում են, արեգակ չենք տեսնում։

Մեր գիւղացիներն արդէն խաղողը վաղուց քաղած են, քամած ու լցնելով կարասներ, բոլոր տեսակներն էլ պարզած են։

Աշնանացանը աւարտելուց անմիջապէս փայտ կտրելին հարանիքները. այս տարուայ ցորենի առատութիւնն զերազանց է և հարանիքների թիւը չատ։

—

Ֆրանսիացի շերամապահ պ. Լերիսիէն Կովկասի գիւղատնտեսական ընկերութեան փոխ-նախագահի անուան տուել է մի յայտարարութիւն, որի մէջ յայտնելով, թէ ինչպիսի ընկած դրութեան մէջ է շերամապահութիւնը Կովկասում և կառավարութեան ցանկութիւնը բարձրացնելու տնտեսութեան այդ ճիւղը՝ նա խնդրում է, որ մի կամ մի քանի յատուկ նիստեր նշանակուին դրան արժանապէս քննելու և նրան բարձրացնելու աւելի պրակտիկական եղանակներ որոնելու համար։

—

Թէրէքի նահանգի Արգունեան գաւառից հաղորդում են այնտեղի տեղական ռուս թերթերին, որ այնտեղերքում յայտնուել են մեծ քանակութեամբ գայլեր և վարազներ (վայրի խոզեր), որոնք յարձակվում մարդկանների վերայ և ոչնչացնում են եղիպտացորենի արտերը։

—

ՄԱՆԳԼԻՍԻՑ.—Այս տարի Մանգլիսի եղանակն չատ լաւ անցկացաւ. բոլոր ամարանոց եկողներն գոհ գնացին իրենց տեղերը, մանաւանդ որ այս տարի ամեն տարուց աւել էր եկողների թիւը։

Եղանակները չատ լաւ են անցկնում. աշնան ցանքերը վերջացել են, այս տարի ամեն տեղ ցորենի հատիկներն նուազ են։ Ամեն բան թանկ է. փող իսպառ չէ երևում։

—Անցեալ սեպտեմբեր ամսի 28-ին մի թօնէթ գիւղացի վրացի երիտասարդ չատ օրի խմելուց յանկարծամահ է եղել։

—

Անցեալները Թիֆլիսի պ. Նահանգապետին մի խնդիր են ներկայացրել 86 հոգու ստորագրութեամբ, որի մէջ ցանկութիւն է յայտնվում ծառաների փոխադարձ օգնութեան ընկերութիւն հիմնելու։ Այժմ, «Нов. Об.»-ի ասելով, քաղաքամասերի պրիստաւներին պատուիրուած է տեղեկութիւն հաւաքել խնդրատուների վարքի և բարոյական յատկութիւնների մասին։

—

Բերլինից ռուս թերթերին գրում են, որ այնտեղի համալսարանին կից ռուս կառավարութիւնը հիմնել է մի առանձին սեմինարիա, որի նպատակն է ռուսական համալսարանների համար հոգեմէական իրաւաբանութեան պրոֆեսորներ պատրաստուին։

—

ԾԱԼԿԱՑԻՑ.—Այս տարի հունձը չատ նուազ էր. բոլոր հաւաքուած օրանը իրենց կալերի մէջ դիզած է, սպասում են լաւ եղանակի, որ կալսեն, համարեա ամեն օր անձրև է գալիս և կալերի մէջ էլ դիզած անձրևից է փտում և կորչում։

—Մայիս ամսին, այս տարի այնպէս ստատիկ անձրև եկաւ, որ Նարտիվան գիւղում 25 տուն քանդեց և 10 հազար բուբլիի վնաս տուեց։

—

Վերջի ժամանակներս աւելի ու աւելի լսվում էին գանգատներ կենդանիների դիակներ հաւաքող կօնտրագէնտի ապօրինի վարմունքի դէմ, թէ նա չատ անգամ ստիպմամբ խլում է կենդանիների տէրերից նրանց սատկած, իսկ չատ անգամ էլ դեռ չը սատկած կենդանիներին (ձի, եզ, կով...)՝ չթողնելով որ տէրը կարողանայ իւր կենդանուց դէթ կաշին վերցնել։ Այդպիսի գանգատներ ներկայացրել էին և քաղաքային խորհրդին, որ քննելով այդ գանգատները, բոլորովին արդարացի է գտել նրանց, ուստի, այս օրերս, Թիֆլիսի պօլիցմէյստերին դիմել է խնդրելով յայտնել բոլոր պօլիցիական բաժիններին, որ պ. Մեչչենսկին (սատկած կենդանիների դիակներ հաւաքող կօնտրագէնտը) կարող է կենդանիների դիակներից օգտուել միայն այն ժամանակ, երբ, տեղական թերթերի ասելով, դիակի տէրերը կը տան իրենց համաձայնութիւնը։

—

Նկող 1888 թուին ս. Հեղինէի կղզում պիտի երևայ արեգակի կատարեալ խաւարումը։ Աստղագէտներն չատ դիտանաններ արդէն պատրաստութիւններ են տեսնում այդ երևոյթը դիտելու համար ս. Հեղինէի կղզին ուղևորվելու։ Տակկինի և Բիկկո պրոֆէսորները, որոնք վերջի օգոստոսի 7-ին պատահած կատարեալ խաւարումը դիտելու համար եկել էին Ռուսիա, մայրաքաղաքի թերթերի ասելով, խնդրել են Պետերբուրգի համալսարանի ֆիզիկական ընկերութեան, որ այդ երևոյթը քննելու համար ս. Հեղինէի կղզին ուղարկեն Ց. Ա. Կլէյբերին։

ՆՈՐԵԼՈՒԿ ԳՈՐԾԻՉՆԵՐԻՆ ՆՈՒԷՐ

—

Վերջին ժամանակները՝ մեր հասարակական կեանքը և մամուլը մի տարօրինակ պատկեր է ներկայացնում։ Կարծես, սիրել է գրականան անիշխանութիւն. ամեն ոք քարոզում է իւր ուղածը, ամեն ոք դուռում է ըստ իւր ցանկութեան։ Երևան են գալիս նորանոր հարցեր, և նրանց հետ զուգընթացաբար մամուլը թխում է և նորանոր գործիչներ զարմանալի և տարբեր ուղղութիւններով։ Յաւալի է, ի հարկէ, երբ գրականան և հասարակական ասպարիզում դուրս են գալիս անլայտ, անպատրաստ, նա և անզուսպ գործիչներ, նա մանաւանդ, երբ այդ ասպարէզը մանուկ է և սկզբնական ճանապարհով է ընթանում։ Այդտեղ մի նշանաւոր գեղծումը կամ մի սխալ և վնասակար ուղղութիւնը ծանր կնիք է դնում հասարակական կեանքի վերայ, երկար ժամանակ խանգարելով ամենակարևոր հարցերի լուծման, կանգնեցնելով յառաջդիմութիւնը և կազմելով մի անշունչ և անկենդան հասարակական լճակ, որի մեռած և անշարժ ջուրը կարող է միայն կենդանացնել ստորերկրեայ թագաւորութեան բնակիչներին։ Մեր ասած մամուլը, որպէս մի փչացած մանուկ՝ չար-մանկական խաղեր է խաղում։ Նա չէ ցանկանում լինել հասարակական և ոչ ազգու ձայն հասկացող և առաջաւոր դասի, նա դառնում է, գուցէ և զարձել է անձնական և արկածախնդիր մարդիկների խաղալիկ։ Մեր թերթերի ընդհանրապէս առած ուղղնական գործունէութիւնը լինում է հակակշիռ, բայց կարճ ժամանակից յետոյ նրանք այնպիսի անախորժ և պախարակելի դիրք են բռնում դէպի միմեանց, որ անկարող են լինում հաւասարիմ մնալ իրենց նպատակներին և կոչումին, կորցնելով ծանրականութեան կէտը և հրապարակախօսներին վայել համբերող դիրքը։ Անմարսելի զրպարտութիւններ անելով, զեկավարուելով համարեա ամեն հարցում անփառութեան և լոկ անձնականութեան տեսակէտով, պարզ է, որ այդ պիսիները անկարող են լուրջ և խաղաղ կերպով ծառայել լաւ նպատակներին, անաչառ գործել հրապարակախօսական դժուար ասպարիզում։ Ի հարկէ ես չեմ բացասում, որ կարող են և պէտք է լինին հակառակ մտքեր, հակառակ կուսակցութիւններ հասարակական խնդիրների վերաբերութեամբ, բայց այդ ամենը ունի իւր որոշ սահմանը և բնաւորութիւնը։ Կուսակցութիւնը նպաստում է գործին, նրա բարելաւ լուծմանը, նա կրթուած ազգերի մօտ երբէք չէ առաջնորդվում կրքերով և հայհոյանքներով, այլ հիմնուելով հասարակական բարձր դաղափարի վերայ՝ ամենայն աղնութեամբ և խոհականութեամբ պաշտպանում է իւր համոզմունքները։ Մինչդեռ մենք, որպէս կրքոտ և դիւրագրգիռ ասիացիներ, տեսնելով կուսակցութեան արտաքին կողմերը, չենք տեսնում նրա ներքին արժանաւորութիւնները, չենք հասկանում, որ նա մտքի մրցման փառաւոր ասպարէզ է բանում։ Հայը ընդունակ է, ամեն ինչ ճշիւ է ըմբռնում, բայց երբէք չէ հասկանում միմեանց յարգելու դաղափարը և մարդկային մտքի լայն ասպարէզը—և այդ ժառանգական պակասութիւն է *)։ Լինելով հրապարակախօս՝ նա այնքան մեծամիտ է իւր կոչումով և ինքնահաւան, որ ոչ միայն անհատների միտքն է ճնշում, այլ հասարակական միտքը. ինչ գործ որ վարի՝ նա հանդիսանում է մեծամիտ, ուրիշին չարգելու յատկութիւնից զուրկ, ատող մտքի ազատութեան—և իմ կարծիքով այդ երևոյթը բուն ասիական է, ասիական զոռողութիւնից և բռնակալութիւնից բղխած, ասիական ինքնահաւանութիւնից առաջացած։ Ցիշեցէք մեր ամենածանր հասարակական խնդիրները, դիտեցէք, ինչպէս էին արծարծում նրանց մեր հրապարակախօսները, և դուք կը տեսնէք, որ նրանք ոչ թէ հանդիստ խօսում էին հարցի էութեան կամ բովանդակութեան մասին, այլ աշխատում էին՝ հերքելով այս կամ այն հակառակորդի միտքը, ստորացնելով նրան, չուտով ստանալ չաղթանակը կամ պահանջում էին անպայման հնազանդութիւն (չիշեցէք կաթողիկոսական ընտրութիւնը, զաղթականութեան հարցը, առանց կրօնի խորութեան հարցը և այլն)—մի խօսքով նրանք աշխատում են ժողովրդին դիւր գալու, նրա պլատոնական սէրը վայելելու, որ նրա միջոցով ճնշեն՝ հակառակ միտքը։

Եւ այս լինում է ոչ թէ նրա համար, որ մենք չունինք ընդունակ մարդիկ, գործին ծառայող մարդիկ, այլ նրա համար, որ մեր ընդունակները և խելօքները դեռ չեն հասել այն աստիճանի ինքնակրթութեան, որ դիտութեան պտուղը և ճառագայթները տարածեն իրենց բնութեան ամեն ճիւղերի վերայ, որ միտքը և բնականութիւնը ազդեն իրենց ժառանգական հոգեկան ձգտումների վերայ։

Այժմ մեր մամուլը՝ փոխանակ ինքնակրթութեան ազնիւ ասպարէզում գործելու, հանդէս է բերում անբուռն բերանները, գրականական հեշտասուններ (сибариты), հասարակական ճնճաղներ, որոնք իրենց կոպիտ և կասկածելի մառաններից հանում են հասարակութեան առաջ կրքով և չարութեամբ լի բաժակներ նրան թունաւորելու դիտաւորութեամբ։ Նրանք մեր գրականան և հասարակական հարթ և արդիւնաբեր արտօրայքը, որոնցից պէտք էր սպասած անուշահոտ և դալար ծաղիկներ, յատակում են քարով և աւազով, և դրանով սպանում են որ և էլ բուսականութիւն։ Նրանք փոխանակ նոր և նուրբ դաղափարներ տարածելու հասարակութեան մէջ, փոխանակ մատակարարելու նրան անդադար պաշար՝ հանդէս են հանում նրա առաջ փչացած պատդարակների վերայ զանազան դաղափարների կմախքը կամ նրանց գարշահոտ տեսակները։ Ցրտնջում էի մամուլի դէմ, բայց իմ մեղմ անբաւականութիւնը դարձրեցի փոխուեցաւ Թիֆլիսում հրատարակուող չաբաթաթերթի և նրա ժամանակաւոր Ա. Մ.-ի կամայականութիւնից։ Արդարև պ. Մ.-ի փչեալ թերթին տուած ուղղութիւնը, նրա հրապարակական յանդգնութիւնը, որով նա մի առանձին պարծանքով է և դղրդոցով է յօդուածներ գրում, մի արտակարգ և պախարակելի հերոսութիւն է մամուլի մէջ, որին իւրաքանչիւր ազնիւ հրապարակախօս պիտի հալածէ։ Բարոյական պահանջ եմ զգում պ.-ի յանդգնութեան դէմ մի քանի խօսք ասել, և դրա համար դիմում եմ նրա մի յօդուածին, որին ինքը առաջնորդող է անուանում, որ տպուած է շաբաթաթերթի № 32 համարում։ Խօսենք պ.-ի խօսքերով, որովհետև նրանք, մեր կարծիքով, անմիջապէս վերաբերում են իրեն, որովհետև պ.-ը անդիտակցաբար մի ներքին զօրութեան ընդդիմամբ նկարագրում է իւր անձնաւորութիւնը։ Սարսափելի «պատկերի ենք հանդիպում, ասում է պ.-ը, երբ հեղինակը մի որոշ խմբագրութեան ոչ միայն բարեկամն է, այլ և աշխատակիցը, և իւր գրուածները տպում է նրա լրագրի մէջ։ Այստեղ ոչ քննադատութիւն կայ, ոչ մատենախօսութիւն, այստեղ տիրում է կատարեալ պարսկական գովասանութիւն։ Աշխատակից-հեղինակի գրուածքը, որքան որ անմիտ է, վիմար է, դատարկ է անդամ, նա փառաբանվում է անպայման բարեկամ լրագրի մէջ, և ոչ միայն փառաբանվում է, այլ և անչընորհք հեղինակը տաղանդ է դառնում, հանճար»։ Այո, շատ ուղիղ է խօսում Ա. Մ. և մենք կ'աւելացնենք, որ այդ տաղտկալի իրողութիւնը աւելի սաստկանում է, երբ աշխատակից հեղինակը ազատութեան կատարեալ իրաւունքներ է ստանում այդ լրագրի մէջ, երբ նա փոխ-խմբագրի պաշտօն է ստանում. այն ժամանակ նրա անկանոն գրութիւնը հանճարեղ, առաջնորդող է հաշվում, նրա «անտաղանդ, դատարկ» հեղինակութիւնը դառնում է «գրականութիւնը ղեկավարող, նրան մտքեր և դաղափարներ ներշնչող» քննադատական չօդուած *)։ Այդ պ. Ա. Մ.-ն հը՞ բաւիրում է ընթերցողներին թերթել մեր լրագիրների հին և նոր համարները, որպէս զի իւր ասածը լոկ խօսքեր չլինին։ Իսկ ես ընթերցողս հրաւիրում եմ Ա. Մ.-ին կատարել աւելի հեշտ գործ - թերթել իրենից ոչ հեռու գտնուող գտնուող չաբաթաթերթի համարները, որտեղ նա աջողութեամբ ապացուցած կը տեսնէ իւր ասածը, որտեղ նա կը տեսնէ (եթէ ուզենաք) իւր պատկերը արժանավայել գեղեցկութեամբ և գեղարուեստական ճարտարութեամբ**)։ Նոյն անձը իրրև թէ կրակ կարած խօսքը առաջ տանելով բացագանչում է. «Ահա մեր գրականան մատենախօսութիւնը։ Մի կողմից անպայման հայհոյանքներ, միւս կողմից անպայման գովասանքներ»։ Կրկին ուղիղ է խօսում։ Գրականական մատենախօսութիւնը մրոտուած է և այլակերպուած, նա պասկվիլների և պամֆլետների բնաւորութիւն է ստացել և այդ ոչ այնքան «խմբագիրների կրքերից», որքան Ճարեկամ և աշխատակից հեղինակների չնորհիւ, որոնք խմբագրի թուլութիւնը ի չարն են գործ դնում, որոնք բռնակալում են լրագրին և անբարոյական ուղղութիւն տալիս նրան, որոնք «իրենց աբեհառոբոՒՒՒՒՒՒՒՒ և ՒՒՒՒՒՒՒՒՒՒՒՒՒՒՒՒ գիրՒՒՒՒՒՒՒՒՒՒՒՒՒՒՒՒ

մարդը պ. Ա. Մ.-ն զարմանալի չէ, առանց որևէ պատրաստականութեան, առանց ուսման և գիտութեան, ոչինչ չտեսած վստահացել է յանձն առնել խղճի և հասարակութեան առաջ պատասխանատու պաշտօններ։ Այսպէս թէ այնպէս այդտեսակ նոքելու և ինչնակոչ գործիչների բարոյական դեղեցկութիւնը բաւական ազդու գրաւական է նրանց մոլորութիւնների և սպէտ վարմունքների։ Նրանք ուռում են և հեծկլտում, երբ տեսնում են իրենցից վեր բարոյականութիւն։ Նրանք թափահարելով իրենց թևերը՝ փորձ են փորձում դեռնից երկնային ամպերին հասնելու և նրանց միջից դուռ և վայրենի քարոզներ կարդալ ժողովրդին, որովհետև նրանց զսպող չկայ, իրենց տեղը ցոյց տուող չկայ։ Ժամանակ է արդէն հալածել մամուլի մէջ կոպիտ ինքնահաւանութիւնը, բարբարոսական կամայականութիւնը, տալ մարքին լայն, բայց որոշ և վայելուչ ասպարէզ, այն ժամանակ գուցէ մեր ինքնակրթութեան գործը հեշտանայ, այն ժամանակ գուցէ մեր բնատուր խելքը լուսաւորութեամբ հանդերձ ազդեն մեր ժառանգական պակասութիւնների վերայ։

Վերջացնում եմ գրութիւնս չերքէզի կենսական խրատով. «Յարգեցէք և լսեցէք խելօքներին, սիրեցէք և խղճացէք վիմարներին, հեռու կացէք և վանդակի մէջ պահեցէք ֆէ-ֆէխներ ունեցողներին, որովհետև նրանք չատ վատագուր մարդիկ են (մանաւանդ երբ աննամուս էլ են։ Խմբ.)։

Կ. Կուսիկ.

Մոսկվա, սեպտ. 12-ին։

ՑԱՐԴՈՑ ԽՄԲԱԳԻՐ

Դեռ ապրիլի սկզբում ես իմ բարեկամին ուղարկեցի յանձնել պատուական «Նոր-Դար»-ին ապպիսի մի յայտարարութիւն մօտաւորապէս. «Ֆարտեցի Վիկտոր Հիւգոյի «Մահուան դատապարտուածի վերջին օրը» գրքուկի հայերէն թարգմանութիւնը ֆրանսերէնից. եթէ հաստատ իմանալի որ չկայ միշեալ գրքուկի հայերէն թարգմանութիւնը տպագրուած կամ ձեռագիր, կը պատրաստէի իմ թարգմանածը տալ տպագրութեան»։

Անցնում է ժամանակ և «Նոր-Դար»-ի № 94 կարդում ենք պատասխանների մէջ. «Վաղարշապատ. Բ. Վ.-ին։ Վիկտոր Հիւգոյի գրքուկը՝ «Դատապարտեալի վերջին վայրկեանները», արդէն հայերէն երկու թարգմանութիւններ ունի, որոնք անցեալ տարի հրատարակուեցան։ Եթէ չենք սխալվում, նոյն գրքուկի թարգմանութիւնը կայ և արևմտեան հայ բարբառով հրատարակուած»։

Ես չատ զարմացայ՝ որ անցած տարի այդ գրքուկի թարգմանութիւնը և այն երկու անգամ հրատարակուած է եղել, իսկ ես նոյնպէս և իմ շրջանում մարդիկ չենք լսել կամ լրագիրներում կարդացել դրա մասին։ Թէպէտ Թերահաւատեցի այդ պատասխանի վերայ, բայց ինչ պէտք էր արած՝ երբ դրական կերպով ասում է «Եբէոս Խաչ մանուկեան ունի, որոնց անցեալ տարի հրատարակեցան». ուստի ես գրեցի բարեկամիս և խնդրեցի մի օրինակ այն գրքուկներից ուղարկել ինձ։ Ինչ կարծիք, որ իմ բարեկամը պատասխանեց թէ այդ գրքուկից ոչ եղել է Թիֆլիսում և ոչ կայ։ Բայց հենց այդ ժամանակները կարդացի դարձեալ «Նոր-Դար»-ում չգիտեմ որ №-ում, մի ապպիսի բան. Աղէքսանդր Աբէլեանց թարգմանել և յանձնել է տպագրութեան Վիկտոր Հիւգոյի «Մահապարտի վերջին օրը»։

Սրանից յետոյ թերահաւատութիւնս աւելի սաստկացաւ, մտածեցի գրել այս մասին, բայց վիշեցի որ համբերութիւնը կեանք է և սպասեցի։ Այժմ ձեռքումս է պ. Աբէլեանցի տպագրուած թարգմանութիւնը, կարդացի. պարոնը չէ ասում թէ արդեօք ֆրանսերէնից է թարգմանել թէ ռուսերէնից, բայց և այնպէս անմահ Հիւգոն եթէ կարդար այդ հայերէն թարգմանութիւնը, կը զայրանար՝ որ իւր մարքերը այդպէս անխնայ աղաւաղում են և սուտեր են ձգում իւր բարձր հանճարի վերայ։ Բայց ինչ եմ ասում, ընթերցողն անգամ զայրանում է, ուր թէ հեղինակը։ Թարգմանութիւնները առ. հասարակ հաղիւ թէ պահում են հեղինակի ներշնչած ոգին, աղդուութիւնը, միով բանիւ՝ գրքի արժանաւորութիւնը, բայց այդ հերքոնուածը համու հոտը փախցրել է։ Տեսնենք.—

Refrain (վերջաբան, երգի վերադարձ.) թարգմանել է աղաղակ. corbeaux (ագռաւներ) թարգմանել է ուրուրներ. il murmura brusquement (... կոպտարար.) թարգմանել է ուժով մրթմրթաց. serrure compliquée (ոլորածոյ, բազմապտոյտ). թարգմանել է գծուարբնաց փականք. le tumulte cessa dans la foule (ժողովը, աղմուկը.) թարգմանել է—ամբոխի մէջ դադարեց ֆուսը. au bord de la croisée (լուսամուտի եղերքումը.) թարգմանել է պատուհանի ոտքին պուշի ծայրումը. petite plante (փոքր-իկ խոտ.) թարգմանել է խոպէ. au lieu de la peine (պատժի փոխարէն) թարգմանել է—փոխանակ... պուռֆանէ. je m' étais senti respirer, palpiter (զգում էի, որ շնչում եմ, բարախում է—զարկում է սիրտս) թարգմանել է—ես զգում էի, որ չընչում եմ... ուռուռում էմ։ Սրանք ոչ թէ բառերի անմեղ փոխանակութիւն են, այլ թարգմանութիւնը անպէտքացրել են բոլորովին, պէտք է կարդալ և տեսնել։ Այսքանը 7—17 երեսը և այն հարևանցի. այսպէս սխալ հասկացուած և թարգմանուած բառեր ծայրէ ի ծայր լիքն են։

Կան և՛ չատ կան ամբողջ նախադասութիւններ, որ պ. թարգմանողը չէ ըմբռնել և տեղը մի անմիտ բան ցեխել է. օրինակներ բերեմ, որ ինքն համոզուի. tressaillir et de ce que j' ai fait et de qu' on me fera (սարսել թէ նրանից՝ որ ես արել եմ և թէ նրանից՝ որ ինձ պիտի անեն.) թարգմանել է—սարսել նրա համար, որ էնպէս էնչ պէտ անէ, կամ թէ քեզ ինչ պիտի անեն, 19 երես։

Les pignons degradés blessent l'oeil (խարխլուած քիւերը (պատերի) աչք են ծակոտում) թարգմանել է—էնէքէնէոուած ոպուռնէրը վիրաւորում են ձեր աչքերը։ 20 երես.

Les feuilles les détrompront (Այս թերթերը—Այս թղթի կտորտանքը պիտի զգացնեն նրանց իրենց մոլորութիւնը.) թարգմանել է—Այս թերթիկները նրանց հաուպուռնէ կանեն։ 26 երես։

Et c'est là pour eux le commencement! (Եւ այդ նրանց համար դեռ սկիզբն է.) թարգմանել է—Եւ այդ նրանց համար դեռ միայն ծաղիկներ էին։ 57 երես։

Մէջ տալով չատերը, գրքի վերջին նախադասութիւնն ևս ցոյց տամ և թող բաւական համարուի.

Ah! les misérables! il me semble qu on monte l'escalier... (Ա՛հ, ԷՇուռուռանէ՛ը, ինձ թվում է թէ քարէ՛ն բանում են սանդուղքները...) թարգմանել է—Ա՛, չարաբնակներ՛, կարծեմ արդէն գալիս են սանդուղքով...

Զմոռանանք որ գրքուկի անունը Le dernier jour d'un condamué (Մահուան դատապարտուածի վերջին օրը) թարգմանել է—Մահապարտի վերջին օրը։ Այո, նա դատապարտուած էր մահուան, բայց չենք կարող ասել թէ մահապարտ էր։

Լեզուի տգիտութեան մասին աւելորդ է և խօսելն իսկ։

Բարգաւիմէս վարդապետ Գէորգեան

Սեպտ. 2-ին, Էջմիածին.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԽԱՆԲԵՆԴ, 13 սեպտեմբերի.—Ժամանակակից երիտասարդների համար սովորութիւն է դարձել «աղջիկ տեսնել»։ Աղջիկ տեսնելը նշանակում է գնալ աղջկայ ծնողների տուն և տեսնել, արդեօք աղջիկը գեղեցիկ է, արդեօք լաւ հագնուած է, արդեօք թէ ընելու ժամանակ լաւ է օրօրվում։ Այս վիմար սովորութիւնը քաղաքից գիւղերն էլ է մուտ գործել։ Մեր երիտասարդները այդ քայլը անելուց մի բան, որ մեր կարծիքով առաջին տեղն է բռնում առանց մտածելու, քննելու են թողնում, իբրև նշանակութիւն չունեցող բան։ Երիտասարդները իրենց նշանած են ընտրում արտաքին գեղեցկութեամբ օժտուած, լաւ հագնուած, լաւ օրօրուող աղջիկներ, առանց ուշք դարձնելու նրա ներքին հոգեկան գեղեցկութեան, բնութեան վերայ, որ ամենից առաւելն է, որ ոչ մի երիտասարդին պատահարը չեն կարող վատնդի ենթարկել, չեն կարող թառամեցնել։ Աղջկայ մի գովելի արժանիքն այդ է, որ երբէք չէ կարող հնանալ։ Երիտասարդները, ինչպէս ասացի, առանց ուշք դարձնելու մեր ակնարկած արժանաւորութեան, իրենց նշանածների հետ պատուելուց և կեանքի ասպարիզում մօգալի քայքայող և մաշեցնող հոսանքին ենթարկուելուց, հետզհետէ դարգակվում են աղքատանում, դանդատներ, արտասնջներ լարուցանում իրենց կեանքի դէմ։ Հարուստների համար ամենքն էլ գիտեն, որ մօղաներին հետևելով թէև չատ բան են կորցնում, այնուամենայնիւ առատի, գործի մեծ ասպարէզ ունենալով կարողանում են դէմ դնել նրա անողոքելի քաղցրութեան։ Ցաւ է տեսնել, որ ներկայ տարիս երիտասարդութիւնն էլ նրանց հետևելով, իրենց սիրատուն կողակիցների սիրտը չահելու համար մօդային գիրկն են ընկնում, որ վատ դժուարին է լինում աղատուել։ Մեր ստորին դասակարգում կան օրիորդներ, որոնք թէև ուսման հատ չեն առել, սակայն օժտուած գեղեցիկ վարք ու բարքով, կատարելագործուած ներքին հոգեկան գեղեցկութեամբ, այսօր տանն են նստած, որովհետև ոչ ոք սիրտ չէ անում մօտենալու նրանց քեասիրութեան պատճառով։ Գեղեցիկ սեռը միշտ զարդարանքներ սիրող է, ինչպէս փոքրիկ երեխայ, զբաղուող է գեղեցիկ հագուստներով և մեր երիտասարդներն աղջկայ արժանաւորութիւնը դրանց մէջ են ուրոնում։ Ղարաբաղում կայ երկու տեսակ մօդայ, մի մասը հետևում է լուսաւորեալ եւրոպացիի տուրնիւրին, իսկ մի մասը տեղական քուրք հագնելուն, գլխին ոսկի դնելուն, ոսկէ գօտի կապելուն, ոսկեայ ժամացոյց կախելուն և այլն, երկուսն էլ սարսափելի ծախքեր է պահանջում լրացնելու։ Ժամանակիս աղքատն էլ է աշխատում իւր կնոջ գլխին ոսկիներ տեսնել, հարուստն խօսք արդէն պատրաստ ունի, թէ երկուսն էլ ինչ նպատակի են այդպէս անում, այդքանը հասկանալի է։ Մթթէ մարդուն ոսկով պիտի ճանաչեն, մթթէ մարդու և կնոջ գիտութիւնը, արժանաւորութիւնը ոսկիներից է կախուած։ Որովհետև ներկայ տարումս երիտասարդութիւնը իսկապէս սխալանքների է ենթարկվում իւր նշանածը ընտրելուց միայն արտաքին գեղեցկութեամբ օժտուած օրիորդներին իրենց կին ընտրելով, ուստի արտաքին գեղեցկութիւն չունեցողների համար մեղանում որոշուած է օժիտ տալ, որ ի հարկէ շատ անեռում կատարում են դաղանապէս։ Վա՛յ քեասիբներին, երբ հասած պատկուելու աղջիկ ունին, երիտասարդները չեն ցանկանում նշանուելու, եթէ օժիտ չի լինիլ։ Օժիտի խնդիրը սովորական բան դառնալով, մեզանում այնօր այդ սովորութիւնը մուտ է գործել և գիւղերում։ Գիւղերում օժիտ տալիս են բայի նախնիքներից սահմանած բաժինքից, նաև ձի, կով, դամէշ, փեսային արծաթեայ զօտի և այլն։ Գիւղերում օժիտի խնդիրը այնպէս զարգացել է, որ փեսան իւր աներից պայմանագիր էլ է պահանջում, որովհետև պատահել են մի քանի դէպքեր, որ աղջիկը պակել տալուց վեռ ծնողները մերժել են փեսային որև է օժիտ տալու։ Այսպիսի պայմանագրերից մէկը մեր ձեռքն է ընկել, որ գրուած է... պարտաւորվում եմ փեսային տալ երեսուն բուբլի, արծաթի թոխակ՝ առնելու, մի կթան (կով) իւր դանան (հորթը) տակին, երկու քէչա, չորս պուլիմպերիալ, 10 կուժ գինի, մի կուժ արաղ, իսկ ինքը փեսան պարտաւոր է մի մսացուկ բերել և մի խալաթ (ընծայ) տալ։ Պայմանագիրը սարքագրած են քահանան, մի քանի մարդիկ, վատ տանուտէրը վաւերացրած է։ Եթէ ժողովրդից սկսեն գինուորներ էլ ժողովել, երևակայեցէք, թէ օժիտն որ աստիճան բարձրանալու է, որովհետև օրիորդների թիւը չափից դուրս շատանալու է։ Անցեալ տարի Վարաղարքն գիւղումն կատարվում էր մի ոչ այնքան կարողութեան տէր մարդու դստեր հարսանիքի հանդէսը։ Հարսանիքը իւր կանոնաւոր ուղղութեամբ անցաւ մինչև երկու զոլի պակման արժանանալը։ Վերջապէս քահանան պակեց երկուսին և երբ հանդէսը ուղեորվում էր փեսայի տուն, մի ահագին խռովութիւն ընկաւ։ Պատճառը հետևեալ էր։ Գիւղերում սովորութիւն է, որ հանդէսը ճանապարհուելու ժամանակ օրիորդին տուած պարգևները, բաժինքը և օժիտը հասարակութեան ցոյց են տալիս։ Ինչպէս սովորութիւնն է բաժինքը ցոյց տուին, սակայն խոստացած օժիտը ցոյց չտուին, որ ինչպէս ասում էին 150 բուբլի էր։ Փեսան խռովեց ինքը հեռացաւ, հարսին թողնելով իւր աներոջ տանը։ Ամսաչափ նորահարսը մնաց իւր ծնողների տանը, որ վատ վերջապէս փեսային հաշտեցնելով մի բան տուին իբրև օժիտ և հարսը տարան նրանց տուն։ Այսպիսի վատ սովորութիւններ գիւղերում քիչ չեն պատահում, նամանաւանդ նշանադրվում են մի քանի տարի մընում, աղջկայ տիրոջ ծախսերի տակ ձգում և վատ հեռանում։ Մթթէ կոնսիստորիային յայտնի չէ թէ որքան զանգատաւորներ կան, որոնք գալիս են բողոքում, որ փեսայից իրենց տրած ծախսերը պահանջեն։ Քանի տարիներ սրանից առաջ գիւղերում հարսանիքները կատարում էին զարմանալի հեշտութեամբ, իսկ ա՛յժմ... Առաջներում աղջկան տալիս էին սահմանած բաժինքը կիսատ—պռատ, իսկ ա՛յժմ... և այդ ամենի պատճառը քաղաքացիներն են, որ իրենք ենթարկուելով զանազան սովորութիւնների, պատճառ են դառնում նոյնը գիւղերումն էլ տարածելու։

Խաչէնի

ՍՂՆԱԽ, 28 սեպտեմբերի.—Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը հարիւր հազարներ է ծախսում, որ բնակիչների համար մաքուր ջուր բերէ. աշխատանք է գործ դնում ընակիչների առողջութիւնը բարելաւելու, իսկ թէ ինչ են անում գաւառներում գաւառացիները—ահա խնդիրը։ Ի հարկէ, չատ քաղաքներ կարօտութիւն չունին հազարներ ծախսելու ջրի համար, որովհետև ջուր ունին այն էլ մաքուր և պարզ. իսկ գալով Սղնախին, պէտք է ասել, որ եթէ այսպէս թողնեն ինչպէս է, այն ժամանակ կատարելապէս ծարաւ կը կտրուինք։ Ինչ են մտածում սղնախեցիները — յայտնի չէ, մի հատ «թաւ դատեխիլի» (կտրուած գլուխ) կոչուած աղբիւրի վերայ լոյս դնել անկարելի է, դա վազ թէ ուշ կամ սպառուելու է կամ քանդուելու—ոչնչանալու։

Զնայելով որ մի քանի անգամ գրուել է այդ մասին, բայց մինչև այժմս աչ ոք ուշադրութիւն չէ դարձրել, երևի սպասում են որ «ապլը չուռ գալ, ապա ճանապարհ չինեն» կամ մտածում են թէ աղբիւրը սպառելով գինուն կը դիմեն և ջրի տեղ գինի գործ կածեն...

Անցեալ թղթակցութեանս մէջ ասացի, որ սղնախեցիները անտարբեր են դէպի հասարակական գործերը, պատճառ, հասարակական ոչինչ չունին, ոչ հասարակական այգի, ոչ օրինաւոր քարած փողոցներ և ոչ կարգին լապտերներ... Սղնախի հայ հասարակութիւնը չգիտէ յարգել և իւր սիրելի հանգուցեալների վիշատակը։ Որովհետև հայոց գերեզմանատունը այնպիսի խեղճ վիճակի մէջ է, որ նկարագրելն աւելորդ է։ Բաւական է ասել, որ այդ տեղով անցնելիս հարկաւոր է քիթը փակել, չնայելով որ զտնուելով հիւսիսարևմտեան պարիսպի մօտ, մի բլրակի վերայ, կարող էր չատ լաւ դրօսարան լինել։ Անցեալներում արժ. գործակալ Տէր Արշակը այդ մասին ժողով հրաւիրելով բացատրել էր գերեզմանատան նշանակութիւնը, յայտնելով նրանց, որ հարկաւոր է յարգել ննջեցեալների վիշատակը, մաքրելով գերեզմանատունը կենդանիների և այլ աղբերից, նստարաններ չինելով այդտեղ, որպէս զի ննջեցեալներին այցելութեան եկած ժամանակը միջոց ունենան մի փոքր հանգստանալու և այդտեղից դիտելու Ալազանի սքանչելի հովիտը։

Ի հարկէ, որ ժողովրդականները համակրութեամբ ընդունում են արժ. գործակալի առաջարկութիւնը և ընտրում են չորս հոգաբարձու այդ մասին հոգս քաշելու։

Բայց ցաւօք սրտի պէտք է ասել, որ այդ հոգաբարձուները անունով միայն մնում են հոգաբարձու և մինչև օրս ոչինչ բանի չեն ձեռնարկել, չնայած զանազան խոստմունքներին։

Նորերումս ժամանակաւոր նահանգական դատարանում, Ներսի ժամանակ, երբ կարդում են մի մեղադրեալի վճիռը, որով նա աքսորի է դատապարտվում, մեղադրեալը յարձակվում է սեղանի վերայ դրած դերսլի և դատաւորների վերայ, բայց ժանդարմիան շատով վերայ հասնելով առաջն է առնում այդ անկարգութեան։ Այդ մասին առանձին արձանագրութիւն է կազմած։

Ռաչիդ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՍԵՐԲԻԱ.—Ինչպէս երևում է, Սերբիայի ներքին դրութիւնը կրկին անորոշութեան է մատնուած։ Միլան թագաւորի և նրա առաջին մինիստր պ. Բիստիչի մէջ ծագած տարաձայնութիւնների մասին լուրերը հաստատվում են։ Ինչպէս յայտնի է, սերբական ազգային ժողովի անդամներից 52-ին նշանակում է թագաւորը՝ օրէնքի զօրութեամբ և որովհետև վերջին ընտրութիւնների միջոցին Բիստիչը միայն 64 ձայն ստացաւ, իսկ արմատականները 71, ուստի իւր կուսակցութիւնը զօրացնելու համար, թագաւորին առաջարկում է այդ 52 հոգին ընտրել իւր կուսակիցներից՝ որին թագաւորը գիմադրում է։ Եթէ թագաւորը վերջնականապէս մերժէ Բիստիչի առաջարկութիւնը, մինիստրութեան հրաժարականը անխուսափելի է։

—Սերբիական սահմաններում վերջի ժամանակներս աւելի և աւելի լաճախ երևում են արնաուաների խմբեր, որոնք լարձակում են գործում Սերբիային պատկանած գիւղերի վերայ։

—Սերբիայի Միլան թագաւորը հոկտեմբերի 1-ին այցելել է աւստրիական կայսրին, որ նոյն օրը ճաշից յետոյ փոխադարձ այցելութիւն է տուել Սերբիայի թագաւորին։ Պալատական ճաշին Շէնբրունում ներկայ են եղել Սակսոնիայի, Սերբիայի թագաւորները և պրուսական պրինց Վիլհելմ։

ԻՐԼԱՆԴԻԱ. Իրլանդացիները, ինչպէս երևում է, երդուել են ուշադրութիւն չդարձնել Սալսբիւրիի մինիստրութեան դրած դրած ստիպողական միջոցների վերայ. նրանք, չնայելով արդիւքին, անդադար միտինգներ (ազգային միութեան) են կազմում և մինչև անգամ լրագիրներն էլ դրանց մասին հաշիւներ են տպում։ Լորդ Սալսբիւրին պատսպարել է Իրլանդիայի տեղապահ զօրքերի թիւը չատացնել։

—Լոնդոնից «Tass. Zeit.»-ին հեռագրում են, որ Տամբերլէնը Կոլրէնում խօսել է մի ճառ, որի մէջ բացատրել է, որ Իրլանդիան ոչ թէ Հօմ-ռուլի (Գլադստոնի առաջարկած բարեփոխութիւնների ծրագիրը) է կարօտ, հապա դրամագլխի և վարկի։ Դժուարին խնդրի միակ վճիռը կլինէր այն, որ հողագործները հողատէրեր դառնային։ Դրա համար անհրաժեշտ դումար կարելի է ձեռք բերել Իրլանդիայի իւր սեպհական միջոցներով։ Կառավարութիւնն էլ ահա այդպէս է մտածում. եթէ այդ աջողուի, դրանով Իրլանդիայում խաղաղութիւնը աւելի լաւ կերպով ապահովուած կլինի, քան թէ դանդաղ զրգռողների միջոցով։

ՄԱՐՕԿԿՕ. — Մադրիդից վերջերս ստացուած տեղեկութիւններին նայելով, Մադրիդի կաբինետի (մինիստրութեան) ուղարկած շրջաբերականը հիւսիսային Աֆրիկայի սպանական հողերը զօրք ուղարկելու մասին, ոչ մի պետութեան կողմից ընդդիմութեան չէ հանդիպել։ Կատիկսում նաև նստեցրած զօրքերն արդէն հասել են Տարիֆ և Ալժեզիր, բացի մի գունդից, որ ցէտուալումն է դուրս եկել։

ԱՆԳԼԻԱ.—Անգլիական կառավարութեան կուրսը, այժմ, գլխաւորապէս ուղղուած է իրլանդական «ազգային միութեան» դէմ, որ հիմնուած է 1882 թուին և այժմ արդէն 1,900 ճիւղեր ունի՝ բազմաթիւ անդամներով։ Իրլանդական քաղաքական ընկերութիւններից սա ամենազօրեղն է մինչև այժմ եղածների մէջ։ Նրա զօրութիւնը կայանում է նրանում, որ նա ներկայացուցիչ է ամբողջ իրլանդական ժողովրդի։ Ամեն կիրակի, ընկերութեան ճիւղերը նիստեր են ունենում, թէև արգիլուած է այդ. նրանք փոխել են իրենց նիստերի տեղերը, թէև չատ անգամ էլ դաղանապէս են կայացնում նիստը և վարում են իրենց գործերը։ Յայտնի ընկերութիւնը կամաց-կամաց դառնում է դաղանի, որ աւելի ևս վտանգաւոր է։

ՖՐԱՆՍԻԱ. «Paris» թերթի ասելով, մտադրութիւն կայ ֆրանսիական զինուորական մինիստրութեան մէջ մեծ փոփոխութիւններ մտցնելու։ Բացի զինուորական մինիստրութիւնից, որ առաջուայ նման պէտք է պատասխանատու լինի պատգամաւորների ժողովի առաջ, մտադրութիւն կայ նշանակելու և մի ընդհանուր հրամանատար զինուորական բոլոր ուժերին, և որին միայն կատարողական իշխանութիւնը կարող է պաշտօնից զրկել, այսինքն, միայն հասարակապետութեան նախագահի կարդադրութեամբ կարող է արձակուել իւր պաշտօնից։ Զինուորական մինիստրութեան ձեռին կմնայ միայն օրէնսդրական իշխանութեան հետ ունենալ լարաբերութիւնները, բիւդջէի որոշումը։ Բոլոր միւս պարտաւորութիւններն, որոնք այժմ զինուորական մինիստրութեան վզին է, կանցնին զբաղխաւոր հրամանատարին, որ մինիստրութեան չպատկանելով, չի ենթարկուիլ պատահական մինիստրութիւններին։ «Paris»-ն կարծում է, որ մտադրութիւն կայ զինուորական նոր մինիստր նշանակելու Ժան-Կազէմիր-Պէրրիէին, իսկ զինուորական ուժի գլխաւոր հրամանատար Պարիզի այժմու զինուորական հրամանատար զեներալ Սոսսիէին։

ԲՕԼՂԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ.—Սատամբուլովը մտադիր է ազգային ժողովին առաջարկելու, որ Բուլղարիան իւր ներքին խնդիրներում բոլորովին անկախ լինի. ներքին խնդիր է համարում նաև իշխանի ընտրութիւնը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

(Մեր երկրի կեանքից)

Մի հովիւ քաղաք է գնում իւր բարեկամի տուն։ Կէս օրուայ ճաշին կլօլակ են բերում առաջը գնում ուտելու։ Նա առանց մտածելու կլօլակը բարձրացնում է և փառաւորապէս կը-ծում, դարձեալ գնում տանի մէջ։ Բերանը սկսում է այրուել, նա ամանչում է բերանից վայր ձգել և մի կերպ սրկրն այրելով կուլ է տալիս. սաստիկ այրուելուց հովուի աչքերից ըսկսում է ջուր հոսել։ Հովիւը դարձեալ պատահում է, որ քաղաք է գնում նոյն բարեկամի տուն։ Այս անդամ ճաշին ոչխար են բերում առաջը։ Հովիւը վերցնում է ոչխարներից մէկը նայում չորս կողմը ասելով. «ընդ՝ էլ՝ ինչ էն օրան ողուղորդ դառն ա է, ամմա որևում պատաալը թագիսամ ոչ», և չի ուտում, կարծելով, որ իւր բերանը կայրէ։

* * *

Ղարաբաղի մի գիւղացի սարսափելի վախկոտ է լինում։ Մի անդամ պատահում է, որ գիշերը մի քանի ընկերների հետ անասունները տանում է արօտ։ Գիշերը քնելու ժամանակ ընկերները վախկոտին իրենց մէջն են առնում, իրրև աւելի ապահով տեղ։ Գոմէշներից մէկը, որ հացի սովորած միշտ տաւարածների պաշտպանների հացը զողանում էր, մտանում է ըընած տաւարածներին, հոտոտելով հացի հոտ է առնում, որ վախկոտի գրպանումն է լինում դրած։ Գոմէշը զգուշութեամբ գրպանից կծում է և սաստկութեամբ տաւարածին քարշում գըրպանը պոկելու։ Տաւարածը յանկարծ զարթնելով զուռում է. «վայ, վայ, հարամ լինէ տարպրնեցին, սրտրպընեցին, վայ, վայ»։ Ընկերները զարթնում են և տեսնելով բանը ինչումն է ծիծաղում են։ Այնուհետև նա էլ վերջին անդամը համարեց արօտ գնալը։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՍԻՄԼԱ. 8 Հոկտեմբերի։ Հերաթ ուղարկուած զինուորական պահպանների մի խումբ կապիտան Իէտին և մայոր Պիկոկին ընդառաջեցին։

ՊԱՐԻԶ. Գենեռալ Կաֆֆարէլը արձակուած է և զօրքի մէջից էլ դուրս է ձգուած։

ԲՕՄԲԷՅ. Էլբ-խանի ադիւտանտներից մինը Հասան-Ալի եկաւ Խազարան, որի պատճառով Էմիրն ուղարկեց այնտեղ ձմերային ընտրանները 4000 հետևակ զօրք ամբաձիգ գունդով։

ՆՕՏՏԻՆԳԷՄ. Գլադստոնը գծեց ազատամիտ կուսակցութեան նախագիծը իրլանդական խնդիրը լուծելու վերաբերմամբ. նա յայտարարեց, որ իւր անձնական հայեացքները չպիտի արգելք լինի այդ խնդրի լուծման. նա պետութեան միութեան դէմ ոչինչ չի ձեռնարկել, բայց միևնոյն ժամանակ էլ ամենևին անուշադիր չի թողնիլ փոքրամասնութեան ճշմարիտ պահանջներից մինը։ Գլադստոնն իւր ճառը վերջացրեց ջերմ հրաւէրով դէպի իրլանդական ժողովուրդը՝ հեռու մնալ որ և է յանցագործութիւններից՝ չնայելով նոյն իսկ գործ դրուած ամեն տեսակ զբրդուեցուցիչ միջոցներին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. 9 Հոկտեմբերի.— Ներքին գործ՝րի մինիստրութեան կարդադրութեամբ «Гатцукъ»-ի թերթը ուլթ ամիս դադարեցրած է։

«Нов. Вр.»-ն հաղորդում է, որ Պետական խորհրդին ներկայացրել են ծանրընթաց երկաթուղիներով տանելի բեռների տուրքերի նախագիծ, նոյնպէս և մի նախագիծ հում բամբակի վերայ հարկը աւելացնելու մասին, որի միջոցին ցամաքով բերած բամբակի վերայ մըտադրութիւն կայ տուրքը 15 կոպէկ աւելի դնելու այն բամբակներից, որ բերում են Լիբաւայի և Օդեսսայի նաւահանգիստները։

«Новости»-ն հաղորդում է, որ ռուսական սպիրտի արտասահման արտահանութիւնը հեշտացնելու համար, մինիստրների կոմիտէը իրաւունք տուեց ֆինանսների մինիստրին թոյլատրելու օդեհան և սպիրտ մաքրող գործարանատէրերին առանց գրաւական ներկայացնելու արտահանել։

«Гражданинъ»-ը հաղորդում է, որ տեղական ֆինանսական հաստատութիւնների բարեփոխութիւնները և Տօբոլսկի, Տոմսկի զինուորական-նահանգապետութիւններում և Ստեպնոյ ու Թուրքեստանի նահանգներում հարկային վերատեսուչներ նշանակելը յետաձգուած է, և թէ հարկային վերատեսուչներ ձմեռը կը նշանակուին Ստավրոպոլի նահանգում և Անդրկովկասում։

ԼՕՆԴՕՆ. Դործից զուրկ ամբոխի պատգամաւորութիւն ընդունեցին ներքին գործերի մինիստրութեան մէջ և լորդ-մերը կոմիտէտ կազմեց բանուորների առանց գործի մնալու առաջն առնելու համար։

Խմբագիր-հրատարակիչ

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

ղնացքների երթևեկութիւնը «Թիֆլիսի» կայարանում։

Բաթում գնում է պօստ. առաւ.	8 ժ.	49 վ.
Բաթումից գալիս է ,, երեկ.	10 ժ.	15 վ.
Բաղու գնում է ,, երեկ.	10 ժ.	46 վ.
Բաղուից գալիս է ,, առաւ.	8 ժ.	6 վ.
Թիֆլիսից Սուրամ գնում է ապրան-քակիր-մարդակիր գնացքը ցեր.	3 ժ.	21 վ.
Սուրամից գալիս ապր. մարդ. գնացք առաւ.	8 ժ.	24 վ.
Թիֆլիսից խառն գնն. առաւօտ.	8 ժ.	20 վ.
Աղստաֆայից ,, ,, երեկոյեան	9 ժ.	18 վ.

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

Եւ ուղարկվում է բաժանորդներին և ցանկացողներին

„ԵՐԱԽԱՅՐԻՔ“

Հրատարակութեան ԵՐԿՐՈՐԴ գիրքը, որ զարդարուած է ՉՈՐՍ գեղեցիկ պատկերով։ Պարունակութիւնն է.

I. Անձրև (երգ)։ II. Մայր և որդի։ III. Հրդեհ (ոտանաւոր)։ IV. Ծուտիկ (հին զրոյց)։ V. Աղքատ։ VI. Խնձորենի։ VII. Ծիլն (Պատասխան պ. Գր. Արծրունիին) (բանաստեղծութիւն)։ VIII. Որսորդ։ IX. Արտուտ (բանաստեղծութիւն)։ X. Եղջերուներ (աւանդութիւն)։ XI. Գիւղական առաւօտ։ XII. Կոյր երգիչ։

Բաժանորդագրութիւնը շարունակվում է. աշակերտուհիների և աշակերտների համար՝ Մէկ բուբլի, հասակաւորների համար՝ Մէկ բուբլի 50 կոպէկ։ Առաջին և երկրորդ գիրքը վաճառվում է Թիֆլիսի գրավաճառանոցներում և Բաղուում՝ պ. Ս. Շիրազեանի գրախանութում։ Առանձին համարը 50 կոպէկ է։ Վաճառվում է նաև հեղինակի մօտ այս հասցէով. Тифлисъ, Аршаку Меграбянъ, 3-я Нагорная, д. № 64.

ԵՐՐՈՐԴ ԳԻՐՔԸ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻՆ

(Ա.զ.) 5—3

Կուկիայի «Թանդոյեան» Սուրբ Աստուածածին եկեղեցու երեցփոխանի պաշտօնավարութեան եռամեայ ժամանակամիջոցը լրացած լինելով, Վիճակային Կոնսիստորիայի հրամանի համաձայն կարդադրուած է Հոկտեմբերի 11-ին կիրակի օրը առաւօտեան ժամի 10-ին կատարել նոր երեցփոխանի ընտրութիւն։

Ուստի՝ յիշեալ եկեղեցու մեծարգոյ ծխականները հրաւիրվում են նոյն եկեղեցու Օրիորդական դպրոցը՝ նշանակած ժամուն մասնակցելու ընտրութեանը։

Վերատեսուչ Թիֆլիսի և Հալաբարի եկեղեցիների բարեկարգութեան՝

Յովհաննէս քահանայ Մարտիրոսեանց։

2—2

«ԵՐԱՍԽ» ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԻՍԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

«Երասխի» առաջին գիրքը կ'ուղարկուի բաժանորդներին հոկտեմբերի 30-ին։

«Երասխ» տպագրվում է սահմանափակ թուով. ուստի յանկացողները շտապելու են։ Ապառիկ բաժանորդագրութիւն չի ընդունվում։

«Երասխի բաժանորդագինն է 3 բուբլի. իսկ ամեն մի գրքի գինն առանձին 2 բուբլի 50 կոպէկ։

Խմբագրութեան վերաբերեալ գործերի մասին դիմելու է Սիմէոն Գուլամիրեանցին այս հասցէով։

Петербургъ, Графскій переволокъ, домъ № 7, кв. № 22. С. Гуламирянцу.

3—1

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

Բժշկապետ Գրիգոր Գասպարեան Տէր-Գրիգորեանցի զգլարեցլոյ

„ՄԱՆԿԱՏԱԾՈՒԹԻՒՆ“

Ծախվում է Կեդրոնական գրավաճառանոցում և հեղինակի բնակարանում՝

Ստարօ-Ինստիտուտսկայա, համար 19.

ԳԻՆՆ Է 50 ԿՈՊԷԿ

6—3

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երիտասարդներին և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Աւանդվող առարկաները սոքա են. 1) Առևտրական Տնտեսութիւն, 2) Առևտրական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային, 4) Թուաբանութիւն հմտութեան վերայ, 5) Առևտրական Թղթակցութիւն, 6) Առևտրական և տնտեսական նամակագրութիւն և 7) Դեղագրութիւն։

Ուսումը սկսվում է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնները օգոստոսի 25-ից, ամենայն օր, երեկոյեան 5-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում՝ Սոլոլակում, Լաբորատորնայա փողոցի վերայ, Յովհաննէս Ղորղանեանի տանը, № 11։ Ծրագիրը ու կանոնները կարող են ստանալ ՉՐԻԱՊԷՍ եղբարց Ծովիանովների բանկային Գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են կուրսերի հիմնողին՝—въ Тифлисъ, С. П. Мануэльянцу.

20—20

Ս. Վ. ԱՐՂՈՒԹԵԱՆՑԻ

Ուսումնարանը, մանկական պարտէզը և ՊԱՆՍԻՈՆԸ գտնվում են Ֆրէյլինեան փողոցում, պետական բանկի դիմացը, տուն № 8. ընդունվում են աշակերտներ գիմնազիոնի առաջին դասարանի համար պատրաստելու։

4—4

ԲԺԻՇԿ ՏԻԿԻՆ ՄԱՐԻԱՄ ԻՍԱՀԱԿԵԱՆՑԸ

Ընդունում է հիւանդներին առաւօտեան ժամը 9-ից մինչև 10-ը, երեկոյեան՝ 4-ից մինչև 5-ը։

Բնակվում է Ստարի-Արսենալնի փողոցի վերայ, տուն Բակրադէ № 20.

X—12

Дозволено цензурою Тифлисъ 9-го Октября 1887 г. Տպարան Մ. Դ. Ռոտինեանց Типографія М. Д. Ротиніанцъ Гол. пр. д. № 42.